

**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում  
ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի 2008թ.  
գործունեության**

**Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԵՐԵՎԱՆ 2009**

# Բովանդակություն

## Հաշվետվությունում ներկայացված են հետևյալ աշխատանքները.

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրմանն ուղղված աշխատանքները.....	2
2. ՖԴԿ ներքին գործընթացների կանոնակարգումը .....	5
3. ՖԴԿ տեղեկատվության հավաքագրմանը, վերլուծությանը և բաշխմանն ուղղված աշխատանքները.....	5
4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կիրառման նկատմամբ վերահսկողության օժանդակմանն ուղղված աշխատանքները.....	7
5. ՖԴԿ միջազգային կապերի ապահովմանն ուղղված աշխատանքները .....	7
6. Ուսուցման և խորհրդատվության ուղղությամբ իրականացված աշխատանքները .....	9
7. «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում գեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման ընթացքը.....	10
8. ԱՄՀ-ի և ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատման նախապատրաստությանն ուղղված աշխատանքները ..	10

## **1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրմանն ուղղված աշխատանքները**

2008 թվականը փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտի օրենսդրության բարեփոխման առումով բեկումնային էր: Մասնավորապես, մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ նոր օրենքը (այսուհետ՝ Օրենք), և Օրենքի ընդունմամբ պայմանավորված 15 օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Օրենքն ուժի մեջ է մտել օգոստոսի 31-ին, Օրենքի անցումային դրույթներով ուժը կորցրած է ճանաչվել նախկին՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը:

Օրենքն առավելագույն կերպով ամրագրում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում առկա միջազգային ստանդարտների պահանջները: Օրենքով նաև ընդլայնվել է հաշվետվություն տրամադրող անձանց շրջանակը և դրանում ներառվել են միջազգային ստանդարտներով սահմանված ոչ ֆինանսական հաստատություններ կամ անձինք: Համաձայն Օրենքի ՀՀ-ում հաշվետվություն տրամադրող անձ են հանդիսանում՝

1. բանկերը,
2. վարկային կազմակերպությունները,
3. արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք,
4. դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք,
5. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք,
6. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուն,
7. ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք,
8. գրավատները,

9. ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք,
10. նոտարները,
11. փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,
12. անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,
13. անհատ ձեռնարկատեր ատոլիտորները և ատոլիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,
14. թանկարժեք մետաղների դիլերները,
15. թանկարժեք քարերի դիլերները,
16. արվեստի գործերի դիլերները,
17. սակարկությունների կազմակերպիչները,
18. շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատները, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք,
19. հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք,
20. վարկային բյուրոները,
21. անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմինը,
22. իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստր):

Օրենքի գործողությամբ պայմանավորված՝ ՖԴԿ կողմից հաշվետու ժամանակաշրջանում մշակվել են մի շարք իրավական ակտեր, որոնց մի մասն ընդունվել է նույն՝ 2008թ. ընթացքում, իսկ մյուսների ընդունումը կանխատեսվում է 2009թ. ընթացքում: Այսպես՝

- Կենտրոնական բանկի խորհրդի 2008թ. սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշմամբ հաստատվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը, որն ուժի մեջ է մտել նոյեմբերի 4-ին: Կանոնակարգով համակարգված ձևով մանրամասնվում են ֆինանսական հաստատությունների նկատմամբ Օրենքից բխող ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջները:

- Կենտրոնական բանկի խորհրդի 2008թ. նոյեմբերի 4-ի թիվ 302-Ն որոշմամբ հաստատվել է «Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու կամ ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու մասին» կարգը, որով հստակեցվում է Օրենքով սահմանված նշված գործառույթի իրականացման կարգը:

- Կենտրոնական բանկի նախագահի 2008թ. սեպտեմբերի 3-ի թիվ 1/886Ա որոշմամբ հաստատվել է «Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ» ուղեցույցը: Նշված ուղեցույցը հստակեցնում ու ընդլայնում է Օրենքով սահմանված կասկածելի գործարքների չափանիշների շրջանակը, ինչպես նաև կիրառության մատչելիության նպատակով յուրաքանչյուր չափանիշի համար նախատեսում է նաև գործնական իրավիճակներ:

- Կենտրոնական բանկի նախագահի 2008թ. սեպտեմբերի 11-ի թիվ 1/913 Ա որոշմամբ հաստատվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանությունների ուղեցույցը»: Ուղեցույցով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգում ի հայտ եկած փողերի լվացման 6 տիպաբանություններ:

- Կենտրոնական բանկի նախագահի 2008թ. նոյեմբերի 11-ի թիվ 1/1154Ա որոշմամբ հաստատվել է «Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ» ուղեցույցը: Հիմք ընդունելով Օրենքի և վերոնշյալ կանոնակարգի պահանջները՝ ուղեցույցով ֆինանսական հաստատություններին առաջարկվում է իրենց

հաճախորդներին դասակարգել ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության՝ հիմնվելով որոշակի չափանիշների վրա:

Օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքով պայմանավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից վերահաստատվել են պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևերը (հաշվետվական ձևերը), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները: Մասնավորապես՝ 2008թ. հուլիսի 31-ի թիվ 231-Ն, 232-Ն, 233-Ն, 234-Ն, 235-Ն, 236-Ն որոշումներով համապատասխանաբար ուժը կորցրած են ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի 2007թ. փետրվարի 20-ի թիվ 55-Ն, 56-Ն, 57-Ն, 58-Ն, 59-Ն, 61-Ն որոշումները և արդեն նոր օրենքի հիման վրա կրկին հաստատվել են 001, 002, 003, 004, 005 և 007 հաշվետվական ձևերը, ինչպես նաև նշված հաշվետվական ձևերի տրամադրման կարգը և ժամկետները:

Վերոգրյալ այն իրավական ակտերը, որոնք վերաբերում են հաշվետվություն տրամադրող անձանց, սահմանված կարգով հրապարակվել են, ուղարկվել են նշված անձանց, ինչպես նաև տեղադրվել են ՖԴԿ ինտերնետային կայքում:

Հաշվետու տարվա ընթացքում ՖԴԿ կողմից մշակվել և շահագրգիռ կողմերին քննարկման են ներկայացվել նաև հետևյալ իրավական ակտերը՝

- «Իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստրի) կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, Իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստրի) հաշվառման կարգը»,
- «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 009 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվառման կարգը »,
- «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 020 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց հաշվառման կարգը»,
- «Ռ-իլետորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 024 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց հաշվառման կարգը »,
- «Անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 025 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հաշվառման կարգը»,
- «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ տրամադրվող հայտարարության ձևի, հայտարարությունը ներկայացնելու կարգի մասին» Կենտրոնական բանկի խորհրդի որոշման նախագիծը,

- «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության բովանդակությունը, ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու մասին» Կենտրոնական բանկի խորհրդի որոշման նախագիծը,
- «Բանկերի ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի և աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշների վերաբերյալ» կարգի նախագիծը:

## 2. ՖԴԿ ներքին գործընթացների կանոնակարգումը


Հաշվետու ժամանակահատվածում լրամշակվել և ավարտուն տեսքի է բերվել ՖԴԿ ներքին ընթացակարգերի վերաբերյալ ձեռնարկը, որը հաստատվել է Կենտրոնական բանկի նախագահի 2008թ. մարտի 14-ի որոշմամբ: Կենտրոնական բանկի նախագահի համապատասխան որոշմամբ հաստատվել է նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի աշխատակիցների շահերի բախման դեպքերի վերաբերյալ» կարգը: Կանոնակարգվել են նաև ՖԴԿ գործունեության այլ ոլորտներ և ՖԴԿ-ն իր գործունեության ընթացքում անցում է կատարել ռիսկերի վրա հիմնված մոտեցման:

## 3. ՖԴԿ տեղեկատվության հավաքագրմանը, վերլուծությանը և բաշխմանն ուղղված աշխատանքները


ՖԴԿ տեղեկատվական շտեմարանը 2008թ. ընթացքում համալրվել է 93396 պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների (թվով 37) վերաբերյալ հաշվետվություններով: Ստացված հաշվետվությունների վերաբերյալ առավել մանրամասն վիճակագրական տվյալները ներկայացված են [Հավելված 1-ում](#): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ՖԴԿ տվյալների շտեմարանում առկա հաշվետվությունների քանակը կազմել է շուրջ 224,5 հազար:

2008թ. ընթացքում ստացված վերոնշյալ հաշվետվությունների թիվը գերազանցել է նախորդ 2006 և 2007 թվականների վիճակագրությանը: Այդ համեմատական պատկերը սխեմատիկորեն ներկայացված է ստորև:

Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվություններ



**Կասկածելի գործարքների  
վերաբերյալ հաշվետվություններ**



2008 թվականի ընթացքում կասկածելի գործարքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները ստացվել են ֆինանսական հաստատություն հանդիսացող հաշվետու անձանցից, մասնավորապես՝ 36-ը բանկերից, իսկ 1-ը՝ արտարժույթի առուվաճառք իրականացնող անձից:

Հաշվետու տարվա ընթացքում ՖԴԿ կողմից վերլուծվել են թվով 46 գործեր և դրվագներ, որոնց վերաբերյալ իրավապահ մարմիններին ներկայացվել է 11 հաղորդում: 2008թ. ընթացքում թվով 6 կասկածելի գործարքների հիման վրա իրականացվել է ֆինանսական միջոցների կասեցում, որոնց գումարային մեծությունը կազմում է շուրջ 800.000 ԱՄՆ դոլար:

ՖԴԿ-ն հաշվետու ժամանակահատվածում օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններից (այսուհետ նաև՝ ՖՀՄ) ստացել է թվով 17, իսկ ազգային գործընկերներից՝ 25 հարցում, որոնցից 19-ը՝ իրավապահ մարմիններից:

Նույն ժամանակահատվածում ՖԴԿ-ն օտարերկրյա գործընկերներին ուղղել է 17 հարցում, իսկ ազգային գործընկերներին՝ 59 հարցում:

Այլ ՖՀՄ-ներից, իրավապահ մարմիններից, Կենտրոնական բանկի ստորաբաժանումներից ստացված ազդակների (բացառությամբ վերը նշված հարցումների) և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների (այսուհետ նաև՝ ԿԳՀ-ների) հիման վրա վերլուծված ՓԼ գործերի վերաբերյալ իրավապահ մարմիններին ուղարկված հարողորդումների, հարուցված քրեական գործերի, դատական քննության ներկայացված գործերի և կայացված դատավճիռների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Ստացված տեղեկատվությունը/ ազդակները (ՖՀՄ-երից, իրավապահ մարմիններից, ԿԲ ստորաբաժանումներից)	ԿԳՀ-երը	Իրավապահ մարմիններին ուղարկված հաղորդումները	Հարուցված քրեական գործերը	Դատական քննության ներկայացված գործերը	Կայացված դատավճիռները

8	37	11	6 <sup>1</sup>	1	0
---	----	----	----------------	---	---

**4. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կիրառման նկատմամբ վերահսկողության օժանդակմանն ուղղված աշխատանքները**

Ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների տրամադրման ընթացքում թույլ տրված խախտումների հետ կապված, Ֆինանսական դիտարկումների կողմից կազմվել են համապատասխան ամփոփագրեր և փոխանցվել են Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությանը: Ներկայացված ամփոփագրերի հիման վրա Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 4 ֆինանսական հաստատության նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Վերոնշյալից բացի, բանկերում, ինչպես նաև այլ ֆինանսական հաստատություններում Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից իրականացվող ստուգումներին մասնակցել են նաև ՖԴԿ աշխատակիցները:

Այլ հաշվետու անձանց կողմից հաշվետվությունների տրամադրման ընթացքում արձանագրված խնդիրների և թույլ տրված խախտումների վերաբերյալ համապատասխան գրություններ են ուղարկվել այդ հաշվետու անձանց վերահսկող պետական մարմիններին:

**5. ՖԴԿ միջազգային կապերի ապահովմանն ուղղված աշխատանքները**

2008թ. ընթացքում ՖԴԿ-ն ակտիվ համագործակցություն է իրականացրել միջազգային կապերի ապահովման բնագավառում՝ շարունակելով միջազգային գործընկերների հետ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները, ինչպես նաև օտարերկրյա ՖՀՄ-ների հետ կնքելով համագործակցության համաձայնագրեր (MoU): Նշված ժամանակահատվածում ՖԴԿ-ն նաև համագործակցություն է իրականացրել օտարերկրյա ՖՀՄ-ների հետ տեղեկատվության փոխանակման բնագավառում, ինչպես նաև աջակցել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող վերլուծություններին՝ տրամադրելով ՀՀ իրավական համակարգի և իրավակիրառ փորձի վերաբերյալ անհրաժեշտ վերլուծություններ:

ՖԴԿ-ն ակտիվորեն աջակցել է Լեռնային Ղարաբաղի ֆինանսական հետախուզության մարմնի ստեղծման հարցում՝ ցուցաբերելով անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն: Մասնավորապես՝ ՖԴԿ օժանդակությամբ ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որի հիման վրա Լեռնային Ղարաբաղի ֆինանսների նախարարության կառուցվածքում ստեղծվել է Ֆինանսական դիտարկումների բաժինը՝ որպես ֆինանսական հետախուզության մարմին: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղում վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով, որի առաջին նիստին մասնակցել է նաև ՖԴԿ ղեկավարը:

ՖԴԿ-ն ներգրավվել է օտարերկրյա ՖՀՄ-ների ձևավորմանը հովանավորության գործառնություններում: Մասնավորապես՝

- ՖԴԿ-ն օժանդակություն է ցուցաբերել Իրանի Իսլամական Հանրապետությունում ստեղծվելիք ՖՀՄ-ի՝ Էզդոնտ խմբին հնարավոր անդամակցության հարցում: Այդ նպատակով 2008թ. կայացած Էզդոնտ խմբի 16-րդ լիագումար նիստում ՖԴԿ-ն ճանաչվել է որպես անդամակցության հարցում Իրանի ՖՀՄ հովանավոր: Այդ կապակցությամբ թե հայկական, թե իրանական կողմի փոխայցելությունների ժամանակ պայմանավորվածություններ են ձեռքբերվել Իրանի ՖՀՄ-ի՝ Էզդոնտ խմբի պահանջներին համապատասխանելու նպատակով ցուցաբերվելիք օժանդակության մասին:

<sup>1</sup> Հարուցված քրեական գործերից երկուսի համար հիմք են հանդիսացել ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին տրամադրված հաղորդումները:

- Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ նաև՝ ԱՄՀ) պատվիրակության կազմում ՖԴԿ-ն մասնակցել է Թուրքմենստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ձևավորմանը և այդ երկրում ֆինանսական հետախուզության մարմնի ստեղծմանն օժանդակելու նպատակ հետապնդող առաքելությանը:

Ամփոփվող ժամանակահատվածում համագործակցության համաձայնագրեր են կնքվել ներքոնշյալ 4 պետությունների ՖՀՄ-ների հետ, որոնց համար հիմք է հանդիսացել Էզմոնտ խմբի ՖՀՄ-ների համար մշակված մոդելային համաձայնագիրը:

- 2008թ. հունվարի 21-ից 24-ը ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հրավերով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Ռուսաստանի Դաշնության ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայության (Ռուսֆինմոնիտորինգ) պատվիրակության այցի շրջանակներում հունվարի 22-ին Ռուսֆինմոնիտորինգի և ՖԴԿ միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

- 2008թ. փետրվարի 4-ին համաձայնագիր է ստորագրվել Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի ֆինանսական մոնիտորինգի դեպարտամենտի և ՖԴԿ միջև:

- 2008թ. փետրվարի 26-ին համաձայնագիր է ստորագրվել Վրաստանի ֆինանսական մոնիտորինգի ծառայության և ՖԴԿ-ի միջև:

- 2008թ. մարտի 13-ին համաձայնագիր է ստորագրվել Ուկրաինայի ֆինանսական մոնիտորինգի պետական կոմիտեի և ՖԴԿ-ի միջև:

Էզմոնտ խմբի գործունեության շրջանակներում ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են 2008թ. ընթացքում կայացած ֆինանսական հետախուզության մարմինների Էզմոնտ խմբի 16-րդ լիազումար նիստին և աշխատանքային խմբերի նիստերին:

2008թ. մայիսի 25-ից 29-ը Սեուլում կայացած Էզմոնտ խմբի 16-րդ լիազումար նիստի ընթացքում հավանության է արժանացել Իրանի Իսլամական Հանրապետությունում ստեղծվելիք ՖՀՄ-ի՝ Էզմոնտ խմբին անդամակցության գործում ՖԴԿ-ն որպես հովանավոր ճանաչելու հարցը<sup>2</sup>: Լիազումար նիստի ընթացքում ՖԴԿ պատվիրակությունը նախաձեռնություն է դրսևորել Էզմոնտ խմբի 2011թ. լիազումար նիստը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու հետ կապված և դրա վերաբերյալ քննարկումներ իրականացրել Էզմոնտ խմբի քարտուղարության հետ: Նշված նախաձեռնությունը քննարկվել և բավարարվել է Էզմոնտի քարտուղարության ու կոմիտեի կողմից:

Եվրասիական խմբի հետ համագործակցության շրջանակներում ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է 2008թ. ընթացքում կայացած Հանցավոր եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդման եվրասիական խմբի 8-րդ և 9-րդ լիազումար նիստերին: Բացի այդ, ՖԴԿ-ն Եվրասիական խմբից ստացված հարցման հիման վրա խմբի քարտուղարությանն է փոխանցել մի շարք տիպաբանությունների կազմման և ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող ուսումնասիրություններ:

Եվրասիական խմբի շրջանակներում ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն՝ ՖԴԿ-ն համաձայնել է աջակցություն ցուցաբերել Եվրասիական խմբի անդամ երկրներին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ձևավորման ուղղությամբ:

ՍԱՆԻՎԱԼ-ի գործունեության շրջանակներում 2008թ. ընթացքում ՀՀ պատվիրակությունները ՖԴԿ ներկայացուցիչների ղեկավարությամբ մասնակցել են ՍԱՆԻՎԱԼ-ի 26-րդ, 27-րդ, 28-րդ լիազումար նիստերին: Նիստերի ընթացքում ՀՀ պատվիրակությունն իր դիրքորոշումն է հայտնել կազմակերպչական և ընթացիկ հարցերի, ՍԱՆԻՎԱԼ-ի անդամ մի շարք երկրների 3-րդ փուլի գնահատման հաշվետվությունների, Առաջընթացի գնահատման հաշվետվությունների և Համապատասխանության բարելավման ընթացակարգի կիրառման վերաբերյալ զեկույցների վերաբերյալ: Ընդ որում, ՀՀ

<sup>2</sup> Էզմոնտ խմբում Իրանի ՖՀՄ-ի հովանավոր է հանդիսանում նաև ՌԻկրաինայի ՖՀՄ-ն:



պատվիրակությունը հանդես է եկել որպես Լիխտենշտեյնի Առաջընթացի գնահատման հաշվետվության ընդդիմախոս:

ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատումների շրջանակում ՖԴԿ-ն մասնակցություն է ունեցել այլ երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գնահատման գործընթացներին: Այսպես, 2008թ. ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչը ներգրավվել է ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Ուկրաինայի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատողների թիմում՝ որպես իրավական հարցերով գնահատող և մասնակցել գնահատողների կողմից երկիր կատարված այցելությանը: 2009թ. ընթացքում նախատեսվում է նաև ՖԴԿ-ի հետագա ներգրավվածությունը գնահատման գործընթացին. մասնավորապես ՖԴԿ ներակայացուցիչները մասնակցելու են Բոսնիայի և Հերցոգովինայի, և Սերբիայի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի գնահատմանը՝ որպես ֆինանսական ոլորտի գնահատողներ:

## **6. Ուսուցման և խորհրդատվության ուղղությամբ իրականացված աշխատանքները**

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ ջանքերով ուսումնական միջոցառումներ են կազմակերպել ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունից դուրս:

ՖԴԿ կողմից կազմակերպվել են սեմինարներ՝ ելնելով Օրենքի դրույթների լուսաբանման անհրաժեշտությունից: Մասնավորապես՝ ՖԴԿ կողմից անցկացվել է այդպիսի սեմինարների շարք Կենտրոնական բանկի աշխատակիցների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, դրամական փոխանցում իրականացնող անձանց, փաստաբանների, նոտարների, անհատ ձեռնարկատեր առույիտորների և առույիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց, ինչպես նաև խաղատների համար:

2008թ. հունվարին ՖԴԿ հրավերով Երևանում ՌԴ պատվիրակության ներկայացուցիչների կողմից ՀՀ իրավապահ մարմինների (ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ մաքսային պետական կոմիտեի, ՀՀ հարկային պետական ծառայության) և Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումների համար անց է կացվել սեմինար՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային համակարգի, ՖՀՄ-ների դերի, ՌԴ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ընդհանուր բնութագրի, ֆինանսական հետախուզության կազմակերպման և իրավապահ մարմինների համագործակցության հարցերի շուրջ:

2008թ. հունվարին ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) ու Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) հովանավորությամբ Մեծ Բրիտանիայում կազմակերպվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ուսուցում ուսուցանողների համար» դասընթաց: Դասընթացին մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի, ՀՀ հարկային պետական ծառայության, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ: Դասընթացի մասնակիցները 2008թ. ընթացքում ՀՀ առանձին գերատեսչություններում և հաստատություններում ուսուցման նոր մեթոդաբանության վրա հիմնված կազմակերպել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի դասընթացներ:

ՖԴԿ և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան համատեղ աշխատանքի արդյունքում 2008թ. նոյեմբերին իրավապահ մարմինների, բանկային համակարգի և ՖԴԿ աշխատակիցների համար կազմակերպվել է ֆինանսական վերլուծության մեթոդներին վերաբերող սեմինար:

ՖԴԿ կողմից 2008թ. ընթացքում իրականացվել է բանկերի ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթի կատարելագործմանն ուղղված ուսուցման կարիքների գնահատում, որի արդյունքների հիման վրա Ֆինանսաբանկային քոլեջում հունիս-հուլիս ամիսներին բանկերի ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների համար կազմակերպվել է ուսումնական դասընթաց:

**7. «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման ընթացքը**

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ նախաձեռնությամբ կայացել է Միջգերատեսչական հանձնաժողովի երկու նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող բազմաթիվ հարցեր: Հանձնաժողովի կողմից քննարկված հարցերից հատկապես կարևորվում են հետևյալները՝

- Օրենքի նախագծի քննարկում, համաձայնեցում և կիրառության գործընթացի համակարգում,
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացվող ռազմավարական բնույթի աշխատանքների քննարկում,
- Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման նախապատրաստմանն ուղղված աշխատանքների համակարգում,
- ՖԴԿ և իրավապահ մարմինների միջև գործող փոխընթացման համաձայնագրերը նոր խմբագրությամբ ստորագրելու հարցը,
- ՖԴԿ կողմից կասկածելի գործարքների վերաբերյալ քրեական հետապնդման մարմիններին ներկայացվող հաղորդումների կարգավիճակի և փողերի լվացման գործերի քննչական ենթակայության վերաբերյալ հարցեր:

Միաժամանակ, հավանություն է տրվել հանձնաժողովի նոր կազմն ի պաշտոնե ձևավորելու և այդ կապակցությամբ ՀՀ Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցին: ՀՀ Նախագահի նոր կարգադրությամբ հանձնաժողովի կազմում ներառվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և ՖԴԿ ղեկավարի՝ որպես հանձնաժողովի քարտուղարի պաշտոնները<sup>3</sup>:

**8. ԱՄՀ-ի և ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատման նախապատրաստությանն ուղղված աշխատանքները**

Հաշվետու ժամանակահատվածում՝ հունիս ամսին, ՖԴԿ նախաձեռնությամբ ստեղծվել են Եվրախորհրդի ԱՄՀ-ի և ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 2009թ. կայանալիք գնահատմանը նախապատրաստվելուն ուղղված միջգերատեսչական աշխատանքային խմբեր: Գնահատման մեթոդաբանության համաձայն, ձևավորվել են 4 աշխատանքային խմբեր՝ ֆինանսական, ոչ ֆինանսական, իրավական և իրավապահ ոլորտներում, որոնցում իրավասու գերատեսչություններից ներառվել են համապատասխան աշխատակիցներ: Այդ խմբերի աշխատանքները համակարգել են ՖԴԿ աշխատակիցները: Կազմակերպվել է նշված աշխատանքային խմբերի չորս հանդիպում: Հանդիպումների ընթացքում աշխատանքային խմբերի յուրաքանչյուր անդամ, ըստ նախապես բաժանված ոլորտների, ներկայացրել է գնահատման հարցաշարի իր

<sup>3</sup> ՀՀ Նախագահի 2008թ. ապրիլի 2-ի թիվ ՆԿ-60-Ա կարգադրությամբ հաստատվել է Միջգերատեսչական հանձնաժողովի նոր ի պաշտոնե կազմը:

նախապատրաստած հատվածը, որի շրջանակներում կազմակերպվել են քննարկումներ:  
ՖԴԿ-ն ամփոփել է գնահատման հարցաշարին տրված պատասխանները:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻՆՔ	2008թ. ընթացքում հաշվառվել են	ընդամենը	2008թ-ի ընթացքում հաշվետու անձանց կողմից ՖԴԿ-ին ներկայացված հաշվետվություններ	
			պարտադիր տեղեկացման	կասկածելի
	հատ	հատ	հատ	հատ
Բանկեր	1	22	89588	36
Վարկային կազմակերպություններ	3	25	498	
Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	54	241	-	1
Արտարժույթի դիլերային- բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	-	2	84	
Դրամական փոխանցում իրականացնող լիցենզավորված անձինք	6	10	-	-
«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն ներդրումային ծառայություններ մատուցող անձինք	-	10	200	-
Ապահովագրական (ներառյալ՝ վերապահովագրական) ընկերություններ	3	11		-
Ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձինք	3	5	204	-
Ապահովագրական գործակալներ	32	47		-
Գրավատուն	19	66	-	-
Նոտարներ	-	73	1232	-
Շահումով խաղ և խաղատներ	37	75	-	-
Վիճակախաղ կազմակերպող անձինք	1	4	-	-
Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին	-	49	1546	-
Ընդամենը՝	159	640	93352	37